

**Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Չավադյանին**

Հարգելի պարոն Չավադյան

Ձեզ ենք ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի 2010թ-ի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակված էլեկտրոնային օրինակները և անկախ աուդիտորական եզրակացությունը:

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան

**ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ No.204**

Ներկայացվում է

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շեն-Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՖՀՄՍ-ների: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրինք աուդիտի միջազգային ստանդարտներով: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք


Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի համախմբված ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2010թ., ինչպես նաև այդ ամսաքվի դրությամբ ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՖՀՄՄ-ների:



Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն



Անժելա Մեսրոպյան
Առդիտոր



30 մայիսի, 2011թ.,
ք. Երևան, Տեղյան 105/1